ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Տնօրինության 30.10.2023թ. թիվ 30 որոշմամբ

# ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ DC01
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

## 1. Ի՞ՆՉ Է ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ծրագիրը ֆիզիկական անձանց պատկանող, 2 ամսականից մինչև 8 տարեկան շների և կատուների ապահովագրություն է:

## 2. Ի՞ՆՉ ՓԱԹԵԹՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

| ԾԱԾԿՈՒՅԹ | ՓԱԹԵԹՆԵՐ | |
|---|---|---|
| | STANDART | EXTRA |
| ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ | 1 000 000 ՀՀ դրամ | 1 500 000 ՀՀ դրամ |
| ՏԱՐԵԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ | 58 000 ՀՀ դրամ | 88 000 ՀՀ դրամ |
| *Ծառայություններ** | | |
| ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺՇՆՆՈՒՄ<br>✓ *Ֆիզիկական զննում*<br>✓ *Սրտի և թոքերի աշխատանքի զննում*<br>✓ *Ավշային հանգույցների զննում*<br>✓ *Արյան ընդհանուր քննություն*<br>✓ *Մեզի և կղանքի ընդհանուր հետազոտություն /միայն անասնաբույժի ցուցմամբ/* | ✓<br>*տարեկան 1 անգամ* | ✓<br>*տարեկան 1 անգամ* |
| 24/7 ԿԼԻՆԻԿԱ | ✓ | ✓ |
| ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ | ✓ | ✓ |
| ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ✓ | ✓ |
| ԼԱԲՈՐԱՏՈՐ, ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ✓ | ✓ |
| ՍՏԱՅԻՈՆԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ✓ | ✓ |
| ԴԵՂՈՐԱՅՔ | ✓ | ✓ |
| ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ✓ | ✓ |
| ԷՎԹԱՆԱԶԻԱ | ✓ | ✓ |
| ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ | ✓ | ✓ |
| ՉԻՊԱՎՈՐՈՒՄ | ✗ | ✓ |
| ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ */կատաղություն և ինֆեկցիոն հիվանդություններ/* | ✗ | ✓<br>*տարեկան 1 անգամ* |

**Հատուցման ենթակա են Ընկերության գործընկեր բժշկական հաստատությունների ցանկից ընտրված բժշկական հաստատությունում ստացված ծառայությունները:*

## 3. Ի՞ՆՉ ՌԻՍԿԵՐԻՑ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆ

Հատուցվում են բժշկական ծախսերը, էվթանազիան, որոնք առաջացել են հետևյալ դեպքերում՝

- ✓ *Հրդեհ կամ Պայթյուն,*
- ✓ *Տարերային աղետներ, բացառությամբ՝ երկրաշարժի,*
- ✓ *Հոսանքահարում,*
- ✓ *Տրանսպորտային միջոցի կողմից վրաերթ,*
- ✓ *Այլ կենդանիների կողմից հասցված վնաս,*
- ✓ *Կոտրանքով գողություն, ավազակություն,*
- ✓ *Երրորդ անձանց կանխամտածված գործողություններ,*
- ✓ *Օտար մարմինների կուլ տալը,*
- ✓ *Թունավորումը,*
- ✓ *Տնային կենդանու կողմից երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ կենդանուն հասցված վնասը:*

## 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության պայմանագիրը կնքվում է 1 տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում ոչ շուտ, քան կնքմանը հաջորդող 2-րդ օրը:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏՎՅԱԼՆԵՐ

- ➢ Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ,
- ➢ Կենդանու անձնագիր,
- ➢ Նույնականացման չիպի համար:

## 6. ԾՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ➢ Պայմանագիրը կնքվում է առանց կենդանուն զննելու,
- ➢ Չհատուցվող գումար չի կիրառվում:

*Ծրագիրը կարգավորվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված «Տնային կենդանիների ապահովագրության պայմաններ»-ով:*